ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարը վարել է թվով 12 ավագանու նիստեր, որից 5-ը արտահերթ, իսկ 7-ը հերթական. որտեղ կայացվել է 50 որոշումներ:
Ընդունել է 63 որոշումներ, արձակել 82 կարգադրություններ

Հունվարի 28-ին Բանակի օրվա և Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կազմավորման 22-րդ տարեդարձի կապակցությամբ Վայքի քաղաքապետը այցելել են Վայքի ավագ դպրոց, որտեղ մասնակցել բաց դասի, որը վարել է Վայոց ձորի նախկին մարզպետ Էդգար Ղազարյանը:
Նույն օրը մասնակցել է ՀՀ ՊՆ 4-րդ բանակային կորպուսի Վայքի գնդում տեղի ունեցած հանդիսավոր միջոցառմանը:

2014թ-ի փետրվարի 18-ին Վայքի քաղաքապետարանի և Քաունթերփարթ ինտերնեյշնլ Հայաստանյան ներկայացուցչության կողմից համատեղ իրականացվող՝ Բարեկարգ քաղաք բարեկեցիկ կյանքի համար, ծրագրի շրջանակներում Վայք քաղաքում տեղադրվել են Վայք քաղաքի լոգոտիպով 12 նստարան և 9 աղբաման

Համայնքի ղեկավարը մասնակցել է 2014թ. փետրվարի 25-ին Վայքի հիմնական դպրոցի 3-րդ և 4-րդ դասարանների ներկայացրած մայրենիին նվիրված միջոցառմանը

Մասնակցել է Սուրբ Զատկի տոնի կապակցությամբ ապրիլի 20-ին Վայքի Սուրբ Տրդատ եկեղեցում մատուցված պատարագին:

Մասնակցել է մայիսի 23- ին ՀՀ - ում Ռումինիայի Արտակարգ եւ լիազոր դեսպանիի հրավերով Հայաստան - Ռումինիա - ԵՎրոպա 2013-2014 համերգաշրջանի շրջանակում տեղի ունեցած Վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգին , որը կայացել է Արամ Խաչատրյան համերգասրահում :

Մայիսի 25- ին մասնակցել է Վայքի Ս ուրբ Տրդատ եկեղեցու բակում կատարված Ս ուրբ Հարություն խաչքար - հուշակոթողի օծման կարգին

Ս/թ հունիսի 22-ից 25-ը քաղաքապետ Հարություն Սարգսյանը և փոխքաղաքապետ Վասիլ Ասլանյանը աշխատանքային այցով մեկնել են Ուկրաինայի Հանրապետության Լվով քաղաք՝մասնակցելու Եվրոմիության կազմակերպած էներգախնայողության համաժողովին, որտեղ քաղաքապետը ստացել է <<Քաղաքապետերի համաձայնագիր>> սերտիֆիկատը,

Մասնակցել է Վայքի Համայնքային կենտրոնի երիտասարդների կողմից 2014 թ . հուլիսի 1-7 կազմակերպված Hakuna Matata ամառային դպրոցի բացման արարողությանը

Մասնակցել է ՀՀ անկախության 23-րդ տարեդարձի առիթով սեպտեմբերի 21-ին անցկացրած համաքաղաքային միջոցառումներին:

Համայնքի ղեկավարը սեպտեմբերին ընդունել է Ռումինիայի քաղաքապետերի պատվիրակությանը, որի շրջանակներում Ռումինիայի Բակաու նահանգի Թրգու Օկնա քաղաքի քաղաքապետի հետ ստորագրել է բարեկամության պայմանագիր:

Հոկտեմբերին ընդունել է Շվեցիարիայի զարգացման և համագործակցության գործակալության, ինչպես նաև՝ գերմանական միջազգային համագործակցության ընկերության /GIZ/ներկայացուցիչներին:

Ապրիլի 23- ին կազմակերպվել է ջահերով երթ՝ նվիրված 1915թ. հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին :

Ապրիլի 24-ին Վայքի բնակիչները սգո քայլերթով այցելել են մեծ եղեռնի զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան՝ հարգանքի տուրք մատուցելով Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին:

ենթակա կառույցների կատարած աշխատանքները՝ ամփոփ

ՎԱՅՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ

1. Ապրիլ ամսին մասնակցել է Գյումրիում կազմակերպված միջազգային փառատոնին
2. Նույն ամսին կազմակերպել են տոնական միջոցառում նվիրված մայրության և գեղեցկության տոնին
3. Երեխաների պաշտպանության օրը արվեստի դպրոցի սաները ելույթ են ունեցել թիվ 1 մանկապարտեզում և մշակույթի տան փոքր դահլիճում
4. Կազմակերպել են տարեվերջյան հաշվետու համերգ
5. Երևան քաղաքում հունիս ամսին Բարսեղ Կանաչյանի անվան արվեստի դպրոցի հետ համատեղ կազմակերպել են համերգ, որը տեղի է ունեցել Արամ Խաչատրյանի տուն թանգարանում:

ՎԱՅՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ սաների թիվը 86, 3 խումբ
ՎԱՅՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ սաների թիվը 114 , 4 խումբ

Համայնքային ենթակայության մանկապարտեզներում հաշվետու ժամանակաշրջանում տեղի են ունեցել միջոցառումներ նվիրված մայրիկների տոնին, Սուրբ Զատկի տոնին, ծաղկազարդի օրվան, երեխաների պաշտպանության օրվան, ամանորին, կազմակերպվել են տարբեր տեսակի մրցույթներ, սպորտային միջոցառումներ, ինչպես նաև ավանդական տարեվերջյան հաշվետու հանդեսներ

ՄԱՆԿԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ 6 խումբ սաների թիվը 112,

Մանկական ստեղծագործության կենտրոնում տեղի են ունեցել հատկյալ միջոցառումները

1. Փետրվար ամսին- տեառն ընդառաջ ,

2. Մարտին <<Անուրջներ>> պարային համույթը Ջերմուկում մասնակցել է <<Հրաժեշտ ձմռանը>> խորագրով միջոցառմանը

3. Մարտին <<Անուրջներ>> պարային համույթը մասնակցել է <<Երևանյան գարուն 2014>> երգի ու պարի միջազգային փառատոնին,

4. Ապրիլին տեղի է ունեցել միջոցառում նվիրված մայրության և գեղեցկության օրվան, ինչպես նաև մեկնել են Երևան՝ մասնակցելու Պարարվեստի միջազգային օրվան նվիրված երգի և պարի փառատոնին:

5. հունիս ամսին Վայքի ՄՍԿ-ի ,,Անուրջներ,, պարի համույթը հատուկ հրավերով եղել է Աջարիայի Հանրապետության Բաթումի և Քոբուլեթի քաղաքներում: Բաթումիում համույթը մասնակցեց ,,Ծովային հարմոնիա,, միջազգային մրցույթ-փառատոնին և արժանացել ,,Լավագույն ազգային պարեր,, մրցանակին:,,

6. Սեպտեմբերին մասնակցել է Հայաստանի Հանրապետության անկախությանը նվիրված տոնական միջոցառմանը

7. Հոկտեմբերին մասնակցել է Եղեգնաձորում Պարի երեկոյին, Վայոցձորյան բերքի տոնին, Խաչիկ գյուղի տոնին

8. Նոյեմբերին <<Անուրջներ>> պարային համույթը մասնակցել է <<Ոսկե աշուն 2014>> երգի ու պարի միջազգային փառատոնին,

9. Դեկտեմբեր ամսին –կազմակերպել է հիշատակի միջոցառում՝ նվիրված 1988թ. երկրաշարժին,
ինչպես նաև ամանորյա դիմակահանդես

Մանկական ստեղծագործության կենտրոնի պարի խմբերը մշտապես ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես համայնքային, այնպես էլ համայնքից դուրս կազմակերպվող միջոցառումներին

ՎԱՅՔԻ ԳՐԱԴԱՐԱՆ ընթերցողների թիվը 1371

1. Ի ուրախություն ընթերցողների հաշվետու ժամանակաշրջանում գրքային ֆոնդը համալրվել է 286 միավոր գրականությամբ, գրադարանը ապահովված է ինտերնետ կապով

2. գրադարանում գործում է <<Նոր գրքեր>>, Հիշարժան տարեթվեր>>, <<Հեքիաթների աշխարհում>>խորագրով ցուցահանդես, ինչպես նաև <<Հավերժի ճամփորդ Հայաստանս>>, <<Վերք Հայաստանի>> խորագրով ցուցահանդեսները

3. Կազմակերպվել է <<Կիկոսի մահը>> <<Շունն ու կատուն>> բեմադրությունը, <<Բնության պոեզիան>> վերնագրով գրական երեկո՝ նվիրված Համո Սահյանի ծննդյան 100 ամյակին, ինչպես նաև <<Գիրքը քո կյանքում>> ճանաչողական միջոցառումը, աստունքի ժամ <<Թող լինի միշտ արևը>> խորագրով՝ նվիրված երեխաների պաշտպանության օրվան:

4. Գրադարանավարի օրը/հոկտեմբերի 7/ կազմակերպվել է միջոցառում, որին հրավիրվել է նաև վետերան գրադարանավարներ

ԱՐԵՎԻԿ ՄԱՐԶԱԴԱՇՏ գործում է 4 խումբ 87 մարզիկներով

1. Ապրիլ ամսին- ֆուտբոլի բաց առաջնություն, որին մասնակցել են 12 թիմեր
2. Մայիս ամսին-<<Լավագույն մարզական ընտանիք>> մրցաշար
3. Հունիս ամսին զորակոչիկների և նախազորակոչիկների տարբեր սպորտաձևերից մարզային առաջնություն
4. Նոյեմբեր ամսին-մինի ֆուտբոլի առաջնություն, որին մասնակցել են 8 թիմեր, ինչպես նաև սպորտային խաղերի օլիմպիադա

ՎԱՅՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ գործում է 8 խումբ 112 մարզիկներով

1. մայիս ամսին- անցկացվել է ԽՍՀՄ հերոս Վահիկ Լևոնյանին անվան վոլեյբոլի հուշամրցաշար
2. Շախմատի խմբի երեխաները մասնակցել են բազմաթիվ մրցաշարերի, որտեղից վերադարձել են պատվավոր մրցանակներով
3. Ապրիլին անցկացվել է վոլեյբոլի փոխանցիկ գավաթի առաջնություն, ինչպես նաև սեպտեմբեր ամսին նույնպես վոլեյբոլի առաջնություն՝ նվիրված ՀՀ անկախության 23-րդ տարելիցին
4. Հաշվետու ժամանակաշրջանում կարատեի խումբը մասնակցել է տարբեր մրցույթների, որտեղ միշտ ունեցել են պատվավոր մրցանակներ

ՎԱՅՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Ապրիլ ամսին-հիշատակի միջոցառում նվիրված Մեծ եղեռնի 99-րդ տարելիցին
2. Մայիս ամսին- տոնական միջոցառում՝ նվիրված Շուշիի ազատագրմանը
3. Մայիս ամսին-Ավագ դպրոցի շրջանավարտների վերջին զանգի միջոցառում
4. Մայիս ամսին մշակույթի տան մեծ դահլիճում տեղի է ունեցել միջոցառում-երեկո նվիրված մեր համաքաղաքացի Հայաստանի շախմատի կանանց չեմպիոնուհի Շուշաննա Սարգսյանին
5. Հուլիս ամսին- Մշակույթի տան մեծ դահլիճում տեղի է ունեցել Զորիկ Հովսեփյանի դեբյուտային աշխատանքի պրեմիերան
6. Օգոստոս ամսին ցուցադրվել է Կամո Ունանյանի <<Ելք չկա, երբ փրկությունը քո ձեռքերում է ֆիլմը
7. Սեպտեմբեր ամսին-Լյոնիդ Ենգիբարյանի անվան դպրոցի կողմից ցուցադրվել է կրկեսային ծրագիր:

8. Հոկտեմբեր ամսին-ցուցադրվել է Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան դրամատիկական թատրոնի <<Հրաղադար>> ներկայացումը

   Ենթակա կառույցների կողմից Մշակույթի տանը իրականացվող բոլոր միջոցառումները կատարվել են մշակույթի տան աջակցությամբ

Ձեզ է ներկայացվում Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վայքի տարածքային բաժնի կողմից գրանցված ակտերի ամփոփ տեղեկատվությունը 2013-2014թվականների համար

	Ծնունդ	Մահ	Ամուսնություն	Ամուսնալուծություն
2013	59	34	37	5
2014	71	40	34	9

1. Համայնքի ղեկավարը կատարել է քաղաքացիների ամենօրյա ընդունելություն, քաղաքացիների կողմից հաշվետու ժամանակաշրջանում ստացվել են թվով 1201 դիմումներ որից 1133-ը տեղեկանքներ տրամադրելու, 43-ը ֆինանսական օգնության, 3-ը հողհատկացման, 4-ը շինարարության թույլտվության, 2-ը շահագործման փաստագրման ակտ տրամադրելու, 1-ը խնամակալության, 4ը արխիվից փաստաթղթերի տրամադրման, 11-ը հասցեավորման կամ վերահասցեավորման:

2. 43 ընտանիքների տրամադրվել է ֆինանսական օգնություն

3. ՀԱՄՔԵ միության միջոցներով <<Տաք ձմեռ>> ծրագրի շրջանակներում համայնքի թվով 20 ընտանիքների տրամադրվել է ֆինանսական օգնություն՝ էլ. էներգիայի կամ գազի արժեք, 10 ընտանիքների տրամադրվել է սնունդ,

4. Մասնակցել է Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Վայքի բաժնի կողմից կազմակերպված հանրային քննարկումներին, համայնքային ոստիկանների ամենամսյա հաշվետվություններին:

5. Տրամադրվել է 8 Ճարտարապետահատակագծային առաջադրանք ,4 շինարարության թույլտվություն, 2 շահագործման փաստագրման ակտ

6. Համայնքի ավագանու համաձայնությամբ օտարվել և օգտագործման է տրամադրվել 1 միավոր հողատարածքներ

7. Կառուցապատման նպատակով ավտոտնակ կառուցելու համար կնքվել է 2 պայմանագիր

8. Երթևեկության անվտանգությունը ապահովելու նպատակով կատարվել է փողոցային գծանշում

9. Առևտրի և ծառայությունների բնագավառում հատկացվել է թույլտվություններ՝
   .ոգելից խմիչքի-59
   .ծխախոտի վաճառքի-50
   .ծաքսի ծառայության-1
   .թանկարժեք մետաղների վաճառքի-1
   .հանրային սննդի կազմակերպման-10

.բացօթյա առևտրի վաճառքի-6
.հեղուկ վառելիքի, սեղմված բնական գազի-5
.տեխնիկական հեղուկների վաճառքի-5

2014թ. դեկտեմբեր ամսից կատարվում է Վայքի քաղաքային համայնքի ջրամատակարարման համակարգի փոխման աշխատանքներ

Վայք համայնքը համագործակցել է Եվրոհանձնաժողովի կողմից ֆինանսավորվող <<Քաղաքային կայուն զարգացման>> ծրագրի շրջանակներում՝ Քաղաքապետերի դաշնագրի ներքո իրականացվող <<Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա>> հիմնադրամի համագործակցությամբ <<Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում>> Ծրագրին: Ծրագրի շրջանակներում 2014-2018թ. ընթացքում նախատեսվում Վայքի քաղաքային համայնքում վերանորոգել թվով 18 բազմաբնակարան շենքերի տանիքներ, փոխել մուտքի դռներ, տեղադրել արևային պանելներ՝ մուտքերի և բակային հատվածների անխափան լուսավորության համար: